



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
«ՊՐՈՖ. Ռ. Հ. ՅՈԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA  
"HEMATOLOGY CENTER AFTER PROF. R. H. YEOLYAN" CJSCo

МИНИСТЕРСТВО ЗДРАВООХРАНЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
"ГЕМАТОЛОГИЧЕСКИЙ ЦЕНТР ИМЕНИ ПРОФ. Р. О. ЕОЛЯНА" АОЗТ

375014 ՀՀ, Երևան, Հ. Ներսիսյան 7  
7 Nersisyan str., Yerevan, Armenia  
РА, Ереван, ул. Нерсисяна 7  
(374 10) 28 38 00, 28 38 93

06.10.2022 N 02-561

«ՅՈՒՆԻՄԵԴ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԶ  
ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ԽՐԻՄՅԱՆԻՆ

### ԾԱՆՈՒՑՈՒՄ

#### Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև Պատվիրատու) և «Յունիմեդ» Հայ-Ռուսական ՀԶ ՍՊԸ-ի (այսուհետ նաև Մատակարար) միջև 08.06.2022թ.-ին կնքվել է թիվ ՅԱԿ-ԳՀԱՊԶԲ-22/44-4 պայմանագիրը (այսուհետ նաև Պայմանագիր), որի թիվ 2 չափաբաժնի շրջանակներում Մատակարարը պետք է մատակարարի հիվանդի մոնիտոր (կարդիոմոնիտոր):

Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանվել է՝

Հիվանդի մոնիտոր

Գունավոր TFT էկրան 15 դյույմ, էկրանի պիքսելները՝ 1280 x 800, լարերի երկարությունը (մոնիտորից մինչև հիվանդ)՝ 3,5 մետր, ST սեգմենտի և առիթմիայի իրական ժամանակի վերլուծություն: Մոնիտորինգի ստանդարտ պարամետրերն են: ECG, RESP, NIBP, SPO2, TEMP և PR: LAN կամ անլար ցանցի միացում կենտրոնական մոնիտորինգի կայանի հետ: Պաշտպանություն բարձր հաճախականության էլեկտրատոմերի և դեֆիբրիլյացիայի ազդեցությունից: Էկրանին էՍԳ-ի I, II, III, avR, avL, avF, V արտաձույնների ցուցադրման հնարավորություն: ԷՍԳ արտաձույն արագությունը՝ 12.5մմ/վ, 25մմ/վ, 50մմ/վ: Ճշգրտությունը:  $\pm 1$  bpm: Թթվածնի հագեցվածությունը զարկերակային արյան մեջ (SpO2)

Միջակայք: 1% - 99%

Թողունակությունը ոչ ավել, քան 1%

Ճշգրտությունը 70% - 99% միջակայքում

1% - 69% միջակայքում

Արյան ճնշման ոչ ինվազիվ (NIBP) չափման օսցիլոմետրիկ մեթոդ: Սահմանները՝ չափահասների/երեխաների համար 40 - 240 mmHg: Նորածինների համար՝ 10 - 150

mmHg: Ավտոմատ ռեժիմում արյան ճնշման ոչ ինվազիվ չափման դադարները՝ 2, 3, 5, 10, 15, 30 րոպե, 1, 2, 4 ժամ: Ճնշումը՝ մեծահասակների մոտ 300 mmHg, երեխաների մոտ 240 mmHg, նորածինների մոտ 150 mmHg: Թողունակությունը 1 mmHg: Սրտի կծկման հաճախականության հաշվարկման սահմանները՝ 30 - 250 bpm, ճշգրտությունը  $\pm 2$  bpm:

Շնչառության հաճախականության չափման և ազդանշանային միջակայքը:

Մեծահասակների մոտ 0-120 rpm, երեխաների/նորածինների մոտ 0 -150 rpm

Թողունակությունը քան 1 rpm, ճշգրտությունը  $\pm 2$  rpm, Ջերմաստիճանի չափման և ազդանշանային միջակայքը՝ 0 ~ 50 C, Թողունակությունը 0,1 ° C, ճշգրտությունը  $\pm 0.1$  C

Սնուցումը: 220 Վոլտ, 50/60Հց

Մարտկոցի շահագործումը՝ Լիթիում մարտկոցի միջոցով, Մարտկոցի գործարկման ժամանակը՝ 8 ժամ:

Սարքը համալրված է մանկական տվիչով և մանժետով:

ISO և EC սերտիֆիկատների առկայություն:

Սույն թվականի հուլիսի 18-ին Մատակարարի կողմից մատակարարվել է 5 հատ հիվանդի մոնիտոր, որոնց վերաբերյալ 29.07.2022թ.-ին ընդունող հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն: Մասնավորապես՝ Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրում մարտկոցի գործարկման ժամանակը սահմանված է 8 ժամ, իսկ փաստացի մատակարարված մոնիտորինը՝ 3 ժամ: Պայմանագրի 2.1.2 կետի բ ենթակետի դրույթներին համապատասխան Պատվիրատուի կողմից սահմանվել է ողջամիտ ժամկետ մատակարարված ապրանքը փոխարինելու համար, սակայն Մատակարարը սահմանված ժամկետում չի իրականացրել ապրանքի փոխարինում:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է պայմանագիրը. Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մատակարարի կողմից խախտվել են պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ուստի Պատվիրատուն միակողմանի հրաժարվում է 2022 թվականի հունիսի 08-ին կնքված թիվ ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/44-4 պայմանագրից՝ համապատասխանաբար այն համարելով լուծված:

ՏՆՕՐԵՆ



ՍԱՄՎԵԼ ԴԱՆԵԼՅԱՆ